ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/126

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.07.2019թ. թիվ 26/26-1/12060-2019 գրությամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.07.2019թ. թիվ ՊՆ/02/1190-2019 գրության հիման վրա, 18.07.2019թ. թիվ 26/26-1/12060-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Գուրգեն Սողոմյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Գուրգեն Սողոմյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմյանի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/126 ընթացակարգի շրջանակներում 26.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.07.2019թ. թիվ ՊՆ/02/1190-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Գրասենյակային գույքի և կենցաղային կահույքի» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին, 4-րդ, 5-րդ, 17-րդ, 23-րդ, 35-րդ և 37-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչվեց Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը, որին անգործության ժամկետի ավարտից հետո հրավերով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով ներկայացվեց պայմանագրի նախագիծը և առաջարկվեց կնքել պայմանագիր: Սակայն Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից 28.06.2019թ. ներկայացվեց գրություն առ այն, որ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանն առողջական վատ վիճակի պատճառով հրաժարվում է պայմանագիր կնքելուց: Քննարկելով Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի կողմից ներկայացված գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին, 4-րդ, 5-րդ, 17-րդ, 23-րդ, 35-րդ և 37-րդ չափաբաժինների մասով մերժել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանի հայտը և հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 7.16 կետը՝ վերջինիս տվյալներն ուղարկել լիազորված մարմին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/126 ընթացակարգի շրջանակներում 26.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 28.06.2019թ. գրությամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.07.2019թ. թիվ 26/26-1/12060-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.07.2019թ. թիվ ՊՆ/02/1190-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 28.06.2019թ. գրությամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը հայտնել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:**

Այսպիսով՝ Ա/Ձ Գուրգեն Սողոմոնյանը Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 28.06.2019թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.07.2019թ. թիվ 26/26-1/12060-2019 գրությամբ Ա/Ձ Գուրգեն Սողոմյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գուրգեն Սողոմյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**